

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2007 թվականի ապրիլի 9-ին

ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հրապարակային ծանուցման՝ ինտերնետով իրականացման կարգն ու պայմանները:

Հոդված 2. Հրապարակային ծանուցումը պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով

Օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, տեղեկատվությունը պարունակող հայտարարությունը պետք է տեղադրվի նաև <http://www.azdarar.am> հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (այսուհետ՝ կայք):

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի վարումը

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի վարման և տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Հոդված 4. Հայտարարությունը ներկայացնելը

1. Հայտարարություն տվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը հայտարարության տեքստը էլեկտրոնային կրիչով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված էլեկտրոնային ֆորմատով, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

2. Հայտարարությունը պետք է ներկայացնի այն հրապարակելու լիազորություն ունեցող անձը կամ նրա լիազորած անձը: Հայտարարության բովանդակության համար պատասխանատու է այն ներկայացնող անձը:

3. Հայտարարության ընդունման և կայքը վարող անձին փոխանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. Կայքում հայտարարությունը տեղադրելը

1. Կայքը վարող անձը հայտարարությունը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է հայտարարության տեքստը կայքում:

2. Կայքում հայտարարությունների տեղադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 6. Կայքից տեղեկատվություն ստանալը

1. Կայքում տեղադրված հայտարարությանը անձը կարող է ծանոթանալ առանցքային բառերի ներմուծմամբ կայքում որոնում իրականացնելու միջոցով:

2. Կայքում տեղադրված հայտարարություններն անձը կարող է ստանալ նաև էլեկտրոնային փոստով՝ կայքում անվճար բաժանորդագրվելու միջոցով:

3. Կայքում տեղեկատվության արխիվացման ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 7. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: